# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 17 | Սեպտեմբեր | 2019 թ. | Բ | 4894754993 |
| [4] Առաքման ամսաթիվ | | | | |
| 9 | Սեպտեմբեր | 2019 թ. | | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 | |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ | N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| [14] Լրացուցիչ տվյալներ | | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | | |
|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | |

| | | | |
|---|---|---|---|
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզ. հարկ | Այդ թվում՝ բնապ. վճարի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 71158819բ/գ, | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

17/09/2019 16:26:16

**ՈՐՈՇՈՒՄ**

**Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին**

23 հուլիսի, 2019թ. ք. Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Տ.Ներկարարյանս, վերանայելով վարույթիս թիվ 71158819 քրեական գործի նյութերը.

**ՊԱՐԶԵՑԻ**

Ոստիկանության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում՝ Վանաձոր քաղաքի Իսահակյան 23/1 բնակարանի բնակչուհի՝ Զալվարդ Ցասոյի Առաքելյանի հաղորդման վերաբերյալ նախապատրաստվող նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Վանաձոր քաղաքի Իսահակյան 25/30 բնակարանի բնակիչ Նարեկ Սարգսի Դեմիրխանյանը 2019 թվականի ապրիլի 27-ին՝ երեկյան, /նյութերով չպարզված ժամի/ Վանաձոր քաղաքի Իսահակյան 23/1 բնակարանի մուտքի դռան բանալին նույն դռան տակ գտնվող շորի տակից վերցնելու, դուռը բացելու միջոցով, զգալի չափերով գողություն կատարելու դիտավորությամբ ապօրինի մուտք է գործել նշված բնակարան, բնակարանում փնտրել գումար, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն չի կարողացել ավարտին հասցնել քանի որ բնակարանում գումար չի եղել:

Դեպքի առթիվ 2019 թվականի ապրիլի 29-ին ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում հարուցվել է թիվ 71158819 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով:

2019 թվականի ապրիլի 30-ին թիվ 71158819 քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունև ընդունվել վարույթ:

Պարզվել է, որ Նարեկ Դեմիրխանյանը 13.01.2009 թվականից հաշվառված է "ՀՀ Լոռու մարզային հոգեՆյարդաբանական դիսպանսեր" ՊՓԲ ընկերությունում "Մտավոր հետամնացություն դեբիլության աստիճանի՝ ապարգելակումով և խոսքի խանգարումներով" ախտորոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ Նարեկ Դեմիրխանյանի մեղսունակության և դրա հետ կապված քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 243-245 և 248 հոդ. հոդ. պահանջներով.

**ՈՐՈՇԵՑԻ**

1.Սույն քրեական գործով նշանակել դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ''ՀՀ Լոռու մարզային հոգե-նյարդաբանական դիսպանսեր'' ՊՓԲ ընկերության փորձահետներին:

2.Փորձաքննության ներկայացնել սույն որոշումը, իսկ Նարեկ Դեմիրխանյանը, թիվ 71158819 քրեական գործի նյութերը և Նարեկ Դեմիրխանյանի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը կներկայացվեն փորձաքննության կատարման օրը:

3.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:

ա/ Նարեկ Դեմիրխանյանը նախկինում և ներկայումս խրոնիկ կամ որևէ այլ հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա կոնկրետ ինչ հիվանդությամբ և երբվանից:

բ/ Եթե Նարեկ Դեմիրխանյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա կարող էր արդյոք հանցավոր արարքը /արարքները/ կատարելու պահին այդ հիվանդությունը զրկել նրան իր գործողությունների փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունից, թե ոչ, արարքը /արարքները/ կատարելիս Նարեկ Դեմիրխանյանի գիտակցել է արդյոք իր արարքի փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը և ունակ է եղել արդյոք ղեկավարել իր գործողությունները, թե ոչ:

գ/ Նարեկ Դեմիրխանյանն արդյոք մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

դ/Հաշվի առնելով Նարեկ Դեմիրխանյանի մոտ առկա հիվանդությունը կարող էր արդյոք նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները և վերարտադրել դրանք, թե ոչ:

ե/ Նարեկ Դեմիրխանյանը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի:

4.Փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Ավագ քննիչ՝** [signature] **Տ.Ա.Ներկարարյան**